

Նպատակաբանական բարոյագիտութեան պարագային, մարդոց վրայ տարածուած բարոյական պահանջքը, որոշ *բարի* նպատակ կամ հետեւանք կը հետապնդէ. այս պատճառով ալ ան նաեւ կը կոչուի՝ հետեւանքային բարոյագիտութիւն կամ *հետեւականութիւն* (Consequentialism), որ աւելի ճիշդ եզրաբանական ձեւն է:

Նպատակաբանական բարոյագիտութեան պարագային, անհատի վարմունքի որպէս շարժառիթ (Motive), կը շեշտուի անհատի նպատակը կամ դիտաւորութիւնը: Եթէ վարմունքի շարժառիթը *բարի* է, ուրեմն վարմունքը եւս *բարի* կ'ըլլայ, նոյնիսկ եթէ վարմունքը, ինքնին, բարոյականութեան դէմ ըլլայ կամ *ճիշդ* չըլլայ: Այլ խօսքով, այստեղ չափանիշ կը կազմեն եւ կարեւորութիւն կը ստանան վարմունքի մը հետեւանքը (կամ հետեւանքները) եւ կամ վարմունքի մը արդիւնքը:

Պարտագիտական բարոյագիտութեան տեսութեան Ա. (սպանութեան) եւ Բ. (ստախօսութեան) օրինակներուն (տե՛ս Էջ 160) վերադառնալով, դիտենք զանոնք նպատակաբանական բարոյագիտութեան տեսանկիւնէն:

Ա. օրինակ՝ սպանութիւնը.-

Այստեղ բռնակալի մը սպանութիւնը կարելի է, որովհետեւ նկատի կ'առնուին անոր *բարի* նպատակը եւ դրական հետեւանքները, որով ամբողջ ժողովուրդ մը պիտի ազատի բռնակալի հետագայ զանազան ճնշումներէն:

Բ. օրինակ՝ ստախօսութիւնը.-

Այստեղ նոյնպէս կարելի է ստել եւ ոճրագործին չյայտնել անոր զոհին թագստոցը, որովհետեւ նկատի կ'առնուին արարքին *բարի* նպատակը եւ դրական հետեւանքները, որով անմեղ անձի մը կեանքը պիտի փրկուի ստոյգ մահէն:

Նպատակաբանական բարոյագիտութեան մէջ կը շեշտուի նաեւ վարմունքի հեղինակ անհատին լայնապարփակ ինքնավարութիւնը: Անհատ, որ իր բոլոր դժուարութիւններն ու խոչընդոտները, ինչպէս բնագոյական մղումները, ծանր իրավիճակները, ժամանակի ճնշումը ու կողմնորոշման հարցերը բոլորովին անկախ ու ինքնիշխան ձեւով եւ իր բանականութեան միջոցով կը յաղթայարէ: Ասիկա սակայն բանական վարուելակերպի խեղալականացումն է, որ մեր առօրեայի համար հազուադէպ է:

Որպէս եզրակացութիւն, կարելի է նպատակաբանական բարոյագիտութիւնը եւս (ինչպէս պարտագիտական բարոյագիտութիւնը) բնորոշել երեք հետեւեալ հաստատումներով.-

- (1) Նպատակաբանական բարոյագիտութեան նպատակը, բարոյական արժէքի մը իրականացումն է.
- (2) Բարոյական *ճիշդ* վարմունքը, ինքը, կախեալ է՝ բարոյական *բարի* շարժառիթէն.
- (3) Բարոյական *ճիշդ* վարմունքը կախեալ է՝ մանաւանդ անոր դրական հետեւանքներէն: